ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 60-Լ

«12» 07 2024 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դատախազների ատեստավորման ընթացքում վերադաս դատախազների կողմից ներկայացվող գնահատագրերում ներառված տեղեկատվությունը հստակեցնելու նպատակով, հաշվի առնելով ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի գործողության մեջ դրվելը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և 50-րդ հոդվածի 11-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 54 և 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 87 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի ապրիլի 26-ի N 44 հրամանի N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նախագահը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական

շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2024 թվականի հուլիսի 12-ի
թիվ «606» հրամանի

« Հավելված N 3

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 26-ի
թիվ « 44 » հրամանի

Գ Ն Ա Հ Ա Տ Ա Գ Ի Ր

Դատախազ _____
(անուն, ազգանուն, հայրանունը)

Ստորաբաժանումը/դատախազությունը _____
Զբաղեցրած պաշտոնը _____
Դասային աստիճանը _____
Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը _____
Ազգությունը _____
Կրթությունը _____
Ստաժը (տվյալ պաշտոնում) _____
Ընդհանուր ստաժը դատախազությունում _____
Պարգևներ _____
(նշվում է միայն նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ստացած պարգևների մասին)

Խրախուսանքներ _____
(նշվում է միայն նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ստացած խրախուսանքների մասին)

Կարգապահական տույժեր _____
(նշվում է միայն նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ստացած կարգապահական տույժերի մասին)

Ընտանեկան կարգավիճակը _____

Երեխաներ _____

Ատեստավորվող դատախազի աշխատանքի գնահատականը, նրա գործնական ու անձնական հատկությունների բնութագիրը

Շարադրվում է նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում դատախազի գործնական, անձնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը՝ հիմնված տարին մեկ անգամ անմիջական վերադաս

դատախազին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների վրա:

Ներկայացվում են նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ներքո գտնված քրեական վարույթների, դատարանում մեղադրանքի պաշտպանության (այդ թվում՝ կայացված մեղադրական և արդարացման դատավճիռների), տրված հանձնարարությունների, կայացված դատավարական ակտերի վերաբերյալ թվային ցուցանիշներ:

Առկայության դեպքում՝ առանձին նշում է կատարվում պետական (համայնքային) շահերի պաշտպանության բնագավառում դատախազական գործառույթների իրականացման, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության վերաբերյալ:

Դատախազի կողմից սեփական նախաձեռնության դատավարական ակտերի կայացման վերաբերյալ տվյալները նշվում են առանձին տողով:

Առանձին տողով նշվում են հաշվետու ժամանակահատվածում դատախազի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ներկայացված միջնորդագրերի քանակական տվյալները և դրանց քննարկման արդյունքում ձեռնարկված միջոցները:

Առանձին անդրադարձ է կատարվում նաև տվյալ դատախազի կողմից կայացված դատավարական ակտերի՝ վերադասության կամ դատական կարգով վերացումների դեպքերին (քանակը)՝ նշելով դրանց հետագա ընթացքը:

Ներկայացվում են դատախազի անձնական և մասնագիտական դրական հատկանիշները, դատախազի վարքագծին, աշխատանքային կարգապահությանը վերաբերելի կամ պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս թույլ տված խախտումները, թերություններն ու բացթողումները:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ՝ _____

(ղեկավարի հետևությունը՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու կամ չհամապատասխանելու մասին)

_____

(ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանունը)

_____

(ստորագրություն)

« » _____ 202 թ.

Ծանոթագա՝

_____

(մեկնաբանություններ և/կամ առարկություններ)

« » _____ 202 թ.

Որակավորման հանձնաժողովի եզրակացությունը

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի որոշումը

_____ »: